



Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01-10-2020 - 31-10-2020թթ. տվյալների ամփոփում

Հաշտարարի գրասենյակը 01-10-2020 - 31-10-2020թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 969 բողոք, որից՝ ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 935-ն են:

Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 935 բողոքներից 49-ը համաձայն «Ֆինանսական համակարգի Հաշտարարի» մասին ՀՀ օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ, պահանջը չի ներկայացվել Օրենքով սահմանված ժամկետներում, Կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվել է և այլն):

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ: Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը:

01-10-2020 - 31-10-2020թթ. Հաշտարարի գրասենյակը քննության է ընդունել 473 պահանջ-դիմում:

Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝	969
Վերաբերում են ֆինանսական համակարգին՝	935
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	49
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	886
2.1 Ընդունվել են քննության, ուղղված են՝	473
2.1. 1. Բանկերի դեմ, կապված են՝	224

• Վարկային գործարքների հետ	167
• Ավանդային գործարքների հետ	53
• Վճարահաշվարկային գործարքների հետ	4
2.1. 2. Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված են՝	219
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	3
• Առողջության ապահովագրության հետ	6
• Պատասխանատվության կամավոր ապահովագրության հետ	1
• ԱՊՊԱ-ի հետ (ներառյալ՝ Բյուրո)	209
2.1. 3. Վարկային կազմակերպությունների դեմ	29
2.1.4. Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների դեմ	1

Քննության ընդունված պահանջների ելքեր (հատ դեպք)՝ [1]	620
Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	193
Պահանջը մասնակի է բավարարվել	55
Պահանջը բավարարվել է	20
Պահանջը մերժվել է	277
Պահանջի քննությունը դադարեցվել է	44
Պահանջի քննությունը մերժվել է	31

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով (374) 60-70-11-11 հեռախոսահամարով կամ այցելելով Մ. Խորենացու փող., 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ: E-mail: info@fsm.am . Web: www.fsm.am

1 Հաշվետու ժամանակաշրջանում հանգուցալուծված պահանջ-դիմումների ելքեր